# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվական**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

..........................................................................................

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Կ. Մանուկյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գավառ համայնքի նորընտիր ավագանու թվով 24 /քսանչորս/ անդամներ՝

Գ. Մարտիրոսյանը, Գ. Դաշտոյանը, Ա. Վարդանյանը, Գ. Մկրտչյանը, Լ. Բաբինյանը,
Ա. Զանգեզուրյանը, Օ. Դանոյանը, Ա. Պողոսյանը, Ս. Ամիրխանյանը,
Ա. Մարուխյանը, Ն. Միրիջյանը, Հ. Գուլաբյանը, Տ. Խաչատրյանը, Լ. Արևշատյանը,
Ա. Կոստանյանը, Դ. Միրիջյանը, Վ. Բաղալյանը, Է. Վարդանյանը, Ն. Զախարյանը,
Վ. Գևորգյանը, Մ. Հարոյանը, Զ. Կիրակոսյանը,
Օ. Օհանյանը, Լ. Ադամյանը

Նիստին մասնակցում էին՝ Գավառ համայնքի ղեկավարի տեղակալներ Գ. Բոշյանը, Ա. Ասլանյանը, վարչական ղեկավարներ

# ՕՐԱԿԱՐԳ

1. Գավառ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
/զեկ. Կ. Մանուկյան /
2. Գավառ համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
/զեկ. Կ. Մանուկյան /
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի եվ վճարների դրույքաչափերը, Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական եվ նախադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող բնակչության որոշակի խմբերի համար արտոնություններ սահմանելու մասին:
/զեկ. Ա. Ասլանյան/
4. Գավառ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակների, հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
/զեկ. Գ. Դաշտոյան/
5. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին:
/զեկ. Ա. Ասլանյան/
6. Համայնքի միկրոռեգիոնալ միավորման համակցված փաստաթղթերի նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:
/զեկ. Դ. Մազմանյան/

ՀԱՐՑ 1.

ՈՐՈՇՈՒՄ 20-Ա. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1.Հաստատել նիստի օրակարգը

Կողմ -24 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ- 0

ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ

ԲԱԲԻՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱԴԱԼՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՏԵՐ

ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ

ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԶԱԽԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴԳԱՐ

ՕՀԱՆՅԱՆ ՕՀԱՆ

ՀԱՐՑ 2.

ՈՐՈՇՈՒՄ 21-Ա. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՄԵՀՐԱԲԻԿ ԼԵՎԻԿԻ ՀԱՐՈՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 5-րդ մասով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Ընդունել ի գիտություն Գավառ համայնքի ավագանու անդամ /«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն/ Մեհրաբիկ Լևիկի Հարոյանի ավագանու անդամի լիազորությունների դադարեցումը և օրենքով սահմանված կարգով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հաջորդ թեկնածուն համարել Միքայել Միքայելյանին:

ՀԱՐՑ 3.

ՈՐՈՇՈՒՄ 22-Ա. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Դ. Միրիբյանը, Ս. Ամիրխանյանը Ա. Կոստանյանը, Ա. Վարդանյանը, Ջ. Կիրակոսյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածների դրույթներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Սահմանել 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի

2.Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական և նախադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող համայնքի բնակչության նշված սոցիալական խմբերի համար սահմանել հետևյալ արտոնությունները

2.1.Երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, մանկատան սաներին, հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների /ազատամարտիկների/ երեխաներին ազատել վարձավճարից:

2.2. Արտադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող միակողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանել զեղչ 50%-ի չափով:

2.3. Մանկապարտեզների սաների հաճախումների բացակայությունների դեպքում, բացակայած օրերի համար վարձավճար չի գանձվում, եթե ծնողը ներկայացրել է բժշկի կողմից տրված տեղեկանք երեխայի հիվանդության վերաբերյալ:

3. Հավելված 1-ի 16-րդ կետով սահմանված դրույքաչափը, որպես քաղաքային համայնք՝ հաշվարկվել է 0.5 գործակցի կիրառմամբ

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա, բացի հավելված 2-ի 12-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 1-ից:

## ՀԻՄԱՎՈՐՈՒՄ
## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածների դրույթները:

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

*Գավառ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանված են օրենքով նախատեսված չափերով:*

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը և վճարները: Հետևաբար տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին ավագանու որոշման նախագծի ընդունումն ուղղված է համայնքի բյուջեի եկամտային մասի ապահովմանը:

Քանի որ տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է, իսկ տեղական վճարը՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է, հետևաբար տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու տեղական տուրքերի և վճարների սահմանման և գանձման հետ կապված հարաբերությունները:

Կողմ -15 Դեմ -8 Ձեռնպահ -1

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ԲԱԲԻՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ

ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՏԵՐ

ԶԱԽԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴԳԱՐ

ՕՀԱՆՅԱՆ ՕՀԱՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 23-Ա. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌևՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Դ. Միրիբյանը, Է. Վարդանյանը, Ն. Զախարյանը, Յ. Ադամյանը, Ա. Կոստանյանը, Օ. Օհանյանը, Ջ. Կոստանյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1.Հաստատել Գավառի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 1-ից:

*«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 160000 |
| 2 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | ՄԵԹՈԴԻՍՏՈՒՍ. ԳԾՈՎՏՆՕՐԵՆԻՏԵՂԱԿԱԼ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 3 | 3 | 110000 |
| 5 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 0.75 | 1 | 110000 |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ | 0.75 | 1 | 110000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ԴԱՍՏԻԱՐԱԿ | | | |
| 7 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 3 | 3 | 98000 |
| 8 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 98000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 98000 |
| 10 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0,5 | 1 | 100000 |
| 11 | ՀԱՎԱՔԱՐԱՐ/ԼՎԱՑԱՐԱՐ | 0,75 | 1 | 98000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12,75 | 15 | |

*«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 150000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 4 | 4 | 110000 |
| 5 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 0.75 | 1 | 110000 |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ | 1 | 1 | 110000 |
| 7 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 4 | 4 | 98000 |
| 8 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 98000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 98000 |
| 10 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0,5 | 1 | 100000 |
| 11 | ՀԱՎԱՔԱՐԱՐ/ԼՎԱՑԱՐԱՐ | 0,75 | 1 | 98000 |
| | ԸՆԴՀԱՄԵՆԸ | 15,5 | 17 | |

*«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 160000 |
| 2 | ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 150000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 3 | 3 | 110000 |
| 5 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 3 | 3 | 98000 |
| 6 | ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ | 1 | 1 | 110000 |
| 7 | ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕԳՆԱԿԱՆ | 1 | 1 | 100000 |
| 8 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 0.75 | 1 | 110000 |
| 9 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ | 0.75 | 1 | 110000 |
| 10 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 98000 |
| 11 | ԽՈՀԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ | 0.5 | 1 | 98000 |
| 12 | ՀՈԳԵԲԱՆ | 0.5 | 1 | 110000 |
| 13 | ԼՈԳՈՊԵԴ | 0.5 | 1 | 110000 |
| 14 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 98000 |
| 15 | ԴՌՆԱՊԱՆ | 0.5 | 1 | 98000 |
| 16 | ՀԱՎԱՔԱՐԱՐ/ԼՎԱՑԱՐԱՐ | 0,75 | 1 | 98000 |
| 17 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 17,25 | 21 | |

*«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | ՄԵԹՈԴԻՍՏՈՒՍ. ԳԾՈՎՏՆՕՐԵՆԻՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 150000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 4 | 4 | 110000 |
| 5 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 0.75 | 1 | 110000 |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ | 1 | 1 | 110000 |
| 7 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 4 | 4 | 98000 |
| 8 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 98000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 98000 |
| 10 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0,5 | 1 | 100000 |
| 11 | ՀԱՎԱՔԱՐԱՐ/ԼՎԱՑԱՐԱՐ | 0,75 | 1 | 98000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 15,5 | 17 | |

*«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 160000 |
| 2 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | ՄԵԹՈԴԻՍՏՈՒՍ. ԳԾՈՎՏՆՕՐԵՆԻՏԵՂԱԿԱԼ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 3 | 3 | 110000 |
| 5 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 0.75 | 1 | 110000 |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ | 0.75 | 1 | 110000 |
| 7 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 3 | 3 | 98000 |
| 8 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 98000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 98000 |
| 10 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0,5 | 1 | 100000 |
| 11 | ՀԱՎԱՔԱՐԱՐ/ԼՎԱՑԱՐԱՐ | 0,75 | 1 | 98000 |
| | ԸՆԴՀԱՄԵՆԸ | 12,75 | 15 | |

*«ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 110000 |
| 3 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 4 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 3 | 4 | |
| | | | | |

*«ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 150000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 130000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենիտեղակալ | 0,25 | 1 | 130000 |
| 4 | Դաստիարակ | 2 | 2 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0,5 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0,5 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 2 | 2 | 98000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0,5 | 1 | 90000 |
| 12 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10,5 | 14 | |

## *«ՆՈՐԱՏՈՒՍԻ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 160000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենհիտեղակալ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | Դաստիարակ | 3 | 3 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.75 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.75 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 3 | 3 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0,5 | 1 | 90000 |
| 12 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13,25 | 16 | |

## *«ՆՈՐԱՏՈՒՍԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 160000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենհիտեղակալ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | Դաստիարակ | 3 | 3 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.75 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.75 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 3 | 3 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0,5 | 1 | 90000 |
| 12 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13,25 | 16 | |

## *«ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 160000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենհիտեղակալ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | Դաստիարակ | 3 | 3 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.75 | 1 | 110000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.75 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 3 | 3 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12,75 | 15 | |

*«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 130000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 110000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենինտեղակալ | 0.25 | 1 | 110000 |
| 4 | Դաստիարակ | 1 | 1 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.5 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.25 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0,5 | 1 | 98000 |
| 11 | Տնտեսվար | 0,25 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 7,25 | 11 | |

*«ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԻԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 160000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենինտեղակալ | 0.5 | 1 | 150000 |
| 4 | Դաստիարակ | 3 | 3 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.75 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.75 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 3 | 3 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12,75 | 15 | |

*«ԼՃԱՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 150000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 130000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենինտեղակալ | 0.25 | 1 | 130000 |
| 4 | Դաստիարակ | 2 | 2 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.5 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 2 | 2 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10 | 13 | |

*«ԾՈՎԱԶԱՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 150000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 130000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծովտնօրենիտեղակալ | 0.25 | 1 | 130000 |
| 4 | Դաստիարակ | 2 | 2 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0.5 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 2 | 2 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10 | 13 | |

*«ԳԱՆՁԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 160000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 1 | 150000 |
| 3 | Մեթոդիստուս. Գծով տնօրենի տեղակալ | 0,5 | 1 | 150000 |
| 4 | Դաստիարակ | 3 | 3 | 110000 |
| 5 | Բուժքույր | 0,75 | 1 | 110000 |
| 6 | Երաժշտության դաստիարակ | 0,75 | 1 | 110000 |
| 7 | Դաստիարակի օգնական | 3 | 3 | 98000 |
| 8 | Խոհարար | 1 | 1 | 98000 |
| 9 | Պահակ | 1 | 1 | 98000 |
| 10 | Հավաքարար /լվացարար | 0.75 | 1 | 98000 |
| 11 | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0,5 | 1 | 90000 |
| 12 | Տնտեսվար | 0,5 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13,25 | 16 | |

*«ԳԱՆՁԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 130000 |
| 2 | ՄԵԹՈԴԻՍՏ | 1 | 1 | 110000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 110000 |
| 4 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 5 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 6 | 6 | |

*«ԳԱՎԱՌԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 150000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | ՄԵԹՈԴԻՍՏ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 130000 |
| 4 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0.5 | 1 | 100000 |
| 5 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 5 | 6 | |

*«ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 160000 |
| 2 | ՓՈԽՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 4 | ՄԱՏԵՆԱԳԵՏ | 1 | 1 | 110000 |
| 5 | ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍՏԱԳԵՏ | 1 | 1 | 110000 |
| 6 | ԿԱԶՄԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐ | 15 | 15 | 100000 |
| 8 | ՕՊԵՐԱՏՈՐ | 1 | 1 | 110000 |
| 9 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 2 | 2 | 100000 |
| 10 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 25 | 25 | |

*«ԳԱՎԱՌԻ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 150000 |
| 2 | ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳԾՈՎ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 110000 |
| 4 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 5 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ | 150ժամ 6,25 դրույք | 8 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 11,25 | 13 | |

| N | ԽՄԲԱԿԻԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| 1 | ԿԵՐՊԱՐՎԵՍՏ |
| 2 | ՀԱԳՈՒՍՏԻՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ |
| 3 | ՁԵՌԱՐՎԵՍՏ |
| 4 | ԱՆԳԼԵՐԵՆՅ ԽՈՒՄԲ |
| 5 | ԴԱՇՆԱՄՈՒՐ-ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ |
| 6 | ԷԹԻԿԱ |

*«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 150000 |
| 2 | ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ | 1 | 1 | 120000 |

| 3 | ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳԾՈՎ | 1 | 1 | 120000 |
|---|---|---|---|---|
| 4 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 120000 |
| 5 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ | 162ժամ 6.75 դրույք | 7 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12.75 | 13 | |

| N | ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| 1 | ՁԵՌԱՐՎԵՍՏ |
| 2 | ՇԱԽՄԱՏ |
| 3 | ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ |
| 4 | ՄԱԿՐԱՄԵ |
| 5 | ԱՆԳԼԵՐԵՆ |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ |
| 7 | ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ |

## *«ԳԱՎԱՌԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՈՒՍՄԱՍՎԱՐ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 4 | ԲՈԺՔՈՒՅՐ | 1,5 | 2 | 100000 |
| 5 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 2 | 2 | 100000 |
| 8 | ԴՌՆԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 9 | ՊԱՀԱԿ-ՀՆՈՑԱՊԱՀ | 1,5 | 1 | 100000 |
| 10 | ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 11 | ՄԱՐԶԻՉՆԵՐ | 340 ժամ 14.2 դրույք | 12 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 26.2 | 24 | |

| N | ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| 1 | ԲԱԶԿԱՄԱՐՏ |
| 2 | ԲՌՆՑՔԱՄԱՐՏ |
| 3 | ԲԱՍԿԵՏԲՈԼ |
| 4 | ԸՄԲՇԱՄԱՐՏ |
| 5 | ՖՈՒՏԲՈԼ |
| 6 | ԿԱՐԱՏԵ |
| 7 | ԵՌԱՄԱՐՏ |
| 8 | ԾԱՆՐԱՄԱՐՏ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳԾՈՎ | 1 | 1 | 120000 |
| 4 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 120000 |
| 5 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ | 162ժամ 6.75 դրույք | 7 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12.75 | 13 | |

| N | ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| 1 | ՁԵՌԱՐՎԵՍՏ |
| 2 | ՇԱԽՄԱՏ |
| 3 | ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ |
| 4 | ՄԱԿՐԱՄԵ |
| 5 | ԱՆԳԼԵՐԵՆ |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ |
| 7 | ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ |

## *«ԳԱՎԱՌԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՈՒՍՄԱՍՎԱՐ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 4 | ԲՈԺՔՈՒՅՐ | 1,5 | 2 | 100000 |
| 5 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 2 | 2 | 100000 |
| 8 | ԴՌՆԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 9 | ՊԱՀԱԿ-ՀՆՈՑԱՊԱՀ | 1,5 | 1 | 100000 |
| 10 | ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 11 | ՄԱՐԶԻՉՆԵՐ | 340 ժամ 14.2 դրույք | 12 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 26.2 | 24 | |

| N | ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| 1 | ԲԱՍԿԵՏԲՈԼ |
| 2 | ԲՌՆՑՔԱՄԱՐՏ |
| 3 | ԲԱՍԿԵՏԲՈԼ |
| 4 | ԸՄԲՇԱՄԱՐՏ |
| 5 | ՖՈՒՏԲՈԼ |
| 6 | ԿԱՐԱՏԵ |
| 7 | ԵՌԱՄԱՐՏ |
| 8 | ԾԱՆՐԱՄԱՐՏ |

## «ԳԱՎԱՌԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ/սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՈՒՍՄԱՍՎԱՐ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 4 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 5 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 2 | 2 | 100000 |
| 7 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 8 | ԴԱՍԱՏՈՒ | 457 ժամ 19,04 դրույք | 21 | 100000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 27,04 | 29 |  |

## «ԳԱՎԱՌԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ/սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՈՒՍ. ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 120000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 4 | ԴԱՍՏ,ԳԾ,ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 120000 |
| 5 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 2 | 2 | 100000 |
| 7 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 8 | ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 10 | ԴԱՍԱՏՈՒ | 515ժ 21,4 դր | 24 | 100000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 31,4 | 34 |  |

## «ԳԱՎԱՌԻ՝ Գ. ԴԱԲԱՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ՝ ԴՈՒԴՈՒԿԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ/սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 150000 |
| 2 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.5 | 1 | 130000 |
| 3 | ԴԱՍԱՏՈՒ | 83 ժամ 3.5 դրույք | 4 | 100000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 5 | 6 |  |

## «ԳԱՆՁԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 150000 |
| 2 | ԴԱՍՏ. ԳԾ. ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 100000 |
| 3 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 110000 |
| 4 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ԴԱՍԱՏՈՒ | 165.5 ժամ<br>6.9 դրույք | 6 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12.9 | 12 | |

*«ՍԱՐՈՒԽԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ԴԱՍՏ. ԳԾ. ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 120000 |
| 3 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 4 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 5 | ՀՆՈՑԱՊԱՀ-ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ԴՌՆԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 7 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 8 | ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 10 | ԴԱՍԱՏՈՒ | 403ժ<br>16.8 դր | 16 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 25.8 | 25 | |

*«ՆՈՐԱՏՈՒՍԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՈՒՍՄԱՍՎԱՐ | 1 | 1 | 120000 |
| 3 | ԴԱՍՏ. ԳԾ. ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 120000 |
| 4 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 5 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 6 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 8 | ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ | 1 | 1 | 100000 |
| 9 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 10 | ԴԱՍԱՏՈՒ | 355ժ<br>14,8 դր | 17 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 23,8 | 26 | |

*«ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 130000 |
| 3 | ԴԱՍՏ. ԳԾ. ՏԵՂԱԿԱԼ | 1 | 1 | 120000 |
| 4 | ԳՈՐԾԱՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 5 | ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1.5 | 2 | 100000 |
| 6 | ՏՆՏԵՍՎԱՐ | 1 | 1 | 100000 |
| 7 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 8 | ԴԱՍԱՏՈՒ | 376.5ժ<br>15.7 դր | 17 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 23.2 | 25 | |

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 340000 |
| 2 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 170000 |
| 3 | ՕԳՆԱԿԱՆ | 4 | 4 | 200000 |
| 4 | ՕՊԵՐԱՏՈՐ | 1 | 1 | 170000 |
| 5 | ՄԵԽԱՆԻԿ | 1 | 1 | 200000 |
| 6 | ԲԱՆՎՈՐ | 21 | 21 | 170000 |
| 7 | ՎԱՐՈՐԴ | 15 | 15 | 170000 |
| 8 | ՎԱՐՈՐԴ ԱՎՏՈԲՈՒՍԻ | 1 | 1 | 90000 |
| 9 | ԷԼԵԿՏՐԻԿ | 2 | 2 | 170000 |
| 10 | ԽԱՌԱՏ-ԵՌԱԿՑՈՂ | 1 | 1 | 170000 |
| 11 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 100000 |
| 12 | ՊԱՀԱԿ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ | 1 | 1 | 100000 |
| 13 | ՀՍԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՂ | | * | |
| | ԸՆԴՀԱՄԵՆԸ | 50 | 50 | |

*Հսկիչ շրջագայողների թիվը և ամսեկան աշխատավարձի չափը սահմանել տվյալ ամսվա ընթացքում ֆիզիկական անձանցից հավաքագրված վարձավճարի գումարի 25 տոկոսի չափով:

Կողմ -15 Դեմ -9 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ — ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ — ԲԱԴԱԼՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ԲԱԲԻՆՅԱՆ ԼԻԼԻԹ — ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՏԵՐ

ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ — ԶԱԽԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ — ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ

ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ — ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ — ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ — ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ — ՕՀԱՆՅԱՆ ՕՀԱՆ

ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 5.

ՈՐՈՇՈՒՄ 24-Ա . ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ, Ջ. Կոստայանը, Ն. Զախարյանը, Դ. Միրիբյանը, Վ. Բադալյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեն համաձայն Հավելվածի
   1) եկամուտների գծով՝ 2,022,000.000 /երկու միլիարդ քսաներկու միլիոն /ՀՀ դրամ, որից՝
   սեփական եկամուտներ 651,580.900 /վեց հարյուր հիսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար ինն հարյուր / ՀՀ դրամ
   2) ծախսերի գծով՝ 2,153,481.780.60 /երկու միլիարդ մեկ հարյուր հիսուներեք միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար յոթ հարյուր ութսուն դրամ 60 լումա /,
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հավելված 1)
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ (հավելված 2)
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հավելված 3)
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ ՝ (հավելված 4)
6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները՝ (հավելված 5)
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հավելված 6)
8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 20 %:
9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

*ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեի հաստատման որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածների պահանջները: Բյուջեի ձևավորման հիմքում ընկած են իրատեսությունը, խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Առավել իրատեսական բյուջե կազմելու համար համայնքի բյուջեի պլանավորումը իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում փաստացի բյուջե մուտքագրված եկամուտների ու ծախսերի շարժը և դրանց վրա ազդող օբյեկտիվ ու սյուբյեկտիվ գործոնները: Բյուջեն պլանավորված է նպաստելու համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, ազգաբնակչության սոցիալական և տնտեսական, ինչպես նաև ձեռնարկատիրական ու արտադրական ոլորտների բարելավմանը:

Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծում եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը կանխատեսվում է՝

1. Եկամուտների գծով՝ 2,022,000.000 /երկու միլիարդ քսաներկու միլիոն /ՀՀ դրամ, որից՝

սեփական եկամուտներ 651,580.900 /վեց հարյուր հիսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար ինն հարյուր / ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով՝ 2,153,481.780.60 /երկու միլիարդ մեկ հարյուր հիսուներեք միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար յոթ հարյուր ութսուն դրամ 60 լումա /,

3. Բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կազմում է 131,481,780.60 / մեկ հարյուր երեսունմեկ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար յոթ հարյուր ութսուն դրամ 60 լումա /, որը ֆինանսավորվելու է տարեսկզբի ազատ մնացորդից:

1. **Բյուջեի եկամուտների կանխատեսում**

Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2,022,000.000 ՀՀ դրամ, որից՝

1) Հարկեր և տուրքեր

Հարկային եկամուտները և տուրքերը 2022 թվականի համար բյուջեի նախագծով ծրագրվել են 439,597.327 ՀՀ դրամ, որից՝

ա. Մինչև 2022 թվականի հունվարի 1-ը հաշվարկված հողի հարկի գծով նախատեսվել է 4,400.000 ՀՀ դրամ,

բ. Մինչև 2022 թվականի հունվարի 1-ը հաշվարկված շենքերի և շինությունների գույքահարկի գծով մուտքերը նախատեսվել է 2,220.000 ՀՀ դրամ,

գ. 2022 թվականի համար համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկի գծով մուտքերը նախատեսվել է 104,105.889 ՀՀ դրամ,

դ. Փոխադրամիջոցների գույքահարկի գծով նախատեսվել է 310,046.838 ՀՀ դրամ:

ե. Տեղական տուրքերի գծով համապատասխան թույլտվությունների համար օրենքով սահմանված տուրքերից 2022 թվականի բյուջեի մուտքերը նախատեսվել է 8,824.600 ՀՀ դրամ:

զ. Պետական տուրքերի գծով նախատեսվել է 10,000.000 ՀՀ դրամ, որից նոտարական ծառայության գծով 5,500.000 ՀՀ դրամ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գծով 4,500.000 ՀՀ դրամ:

2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու սկզբունքով Գավառ համայնքին 2022 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ծրագրվել է՝ 1,356,159.800 ՀՀ դրամ՝ 2021 թվականին նախատեսված 1,359,605.900 ՀՀ դրամի համեմատ նվազելով՝ 3,446.100 ՀՀ դրամով, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացման /սուբվենցիաներ՝ազգային նվագարանների գծով/ գումարը կազմում է 9,804.900 ՀՀ դրամ:

3) Այլ եկամուտները 2022 թվականի բյուջեով նախատեսվել են 216,437.973 ՀՀ դրամ՝ այդ թվում.

ա. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ՝ 33,687.560 ՀՀ դրամ,

բ. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ՝ 7,399.900 ՀՀ դրամ:

գ. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականության իրավունքով պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ՝ 2,100.000 ՀՀ դրամ:

դ. Այլ գույքի վարձակալությունից մուտքեր՝ 4,331.900 ՀՀ դրամ:

Գույքի վարձակալությունից եկամուտները ծրագրվել են՝ հիմք ընդունելով վարձակալական լուծված և նոր կնքված պայմանագրերը:

ե. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները ծրագրվել են 4,454.400 ՀՀ դրամ:

զ. Տեղական վճարների գծով ցուցանիշները ծրագրվել են հիմք ունենալով ավագանու կողմից սահմանված Գավառ համայնքում տեղական վճարների դրույքաչափերը: Գավառ համայնքում տեղական վճարներ է սահմանվել համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 35,340.000 ՀՀ դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար՝ 49,892.500 ՀՀ դրամ, համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ 71,545.800 ՀՀ դրամ, համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ 2,000.000 ՀՀ դրամ:

է.Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 3,400.000 ՀՀ դրամ:

ը. վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ՝ 665.913 ՀՀ դրամ:

թ. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ է նախատեսվում 1,620.000 ՀՀ դրամ:

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտ նախատեսվում է 385,000.000 ՀՀ դրամ՝ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից:

2. Բյուջեի ծախսերի պլանավորում

Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 2,153,481.780.60 ՀՀ դրամ:

Նախագծով նախատեսված բյուջետային ծախսերում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտի ծախսերը կազմում է 25.3 տոկոս, պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 0.1 տոկոս, տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերը՝ 9.3 տոկոս, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 9.2 տոկոս, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության ոլորտի ծախսերը՝ 2.9 տոկոս, առողջապահության ոլորտի ծախսերը՝ 0.8 տոկոս, հանգիստ, մշակույթ և կրոնի ոլորտի ծախսերը՝ 17.4 տոկոս, կրթության ոլորտի ծախսերը՝ 33.8 տոկոս, սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 0.5 տոկոս, համայնքի պահուստային ֆոնդ՝ 0.7 տոկոս:

Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծրագրված ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները.

1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Այս ծրագրով նախագծում ծախսերը կազմել են 436,057.297.60 ՀՀ դրամ: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում աշխատավարձի ֆոնդը կազմում է՝ 333,527.800 ՀՀ դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկն իրականացվել է Գավառ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա, որով նախատեսված է 114.5 հաստիքային միավոր /120 աշխատակից/: Ինչպես նաև համայնքապետարանի բնականոն գործունեությունն ապահովելու համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում ծրագրով նախատեսվել է 52,950.000 դրամ: Վարչական սարքավորումների գծով նախատեսվել է 11,000.000 ՀՀ դրամ՝ աշխատակազմի համար գույք և տեխնիկա ձեռք բերելու: Տրանսպորտային միջոց ձեռք բերման համար նախատեսվել է 35,000.000 ՀՀ դրամ: 2021թ. սուբվենցիոն ծրագրով որպես պարտք Նորատուսի համայնքապետարանի շենքի ու գազատարի կառուցման և նախագծահետազոտական ծախսերի համար ծրագրվել է 3,579.497.60 ՀՀ դրամ :
2. Ընդհանուր բնույթի ծառայություններ ծրագրով ծախսերը նախատեսվել են 2,052.300 ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է տեղեկատվական ծրագրերի /Վեկտոր պլյուս և ՏՀԶՎԿ/ և համակարգչային այլ ծառայությունների ձեռք բերման ֆինանսավորումը:
3. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 108,400.000 ՀՀ դրամ, որից 73.400.000 ՀՀ դրամը իր մեջ ներառում է համայնքային գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման, չափագրման, տրանսպորտի վարձակալության, հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ներկայացուցչական ծախսերի, տեղեկատվական ծառայությունների ձեռք բերման, մի շարք հասարակական կազմակերպությունների աջակցման և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների տնտեսական զարգացման ծրագրին մասնակցության հետ կապված ծախսերը, իսկ 2022թ. համայնքում իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի համար նախագծահետազոտական փաստաթղթերի ձեռք բերման ծախսերը կազմում են 35,000.000 ՀՀ դրամ:
4. Պաշտպանություն ծրագրով նախատեսվել է 2,565.000 ՀՀ դրամ ռազմական և քաղաքացիական պաշտպանությանը նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելու, ինչպես նաև տագնապ ազդանշանային համակարգ և հիդրանտներ ձեռք բերելու համար:
5. Գյուղատնտեսության ոլորտում իրականացվելիք աշխատանքները ծրագրվել են 24,774.900 ՀՀ դրամի չափով, որից 17.115.500 ՀՀ դրամ՝ ոռոգման /Գանձակի խորքային հորի հորատման, Սարուխանի և Գեղարքունիքի ոռոգման ցանցերի կառուցման սուբվենցիոն ծրագրերի նախորդ տարվա պարտք/, իսկ 7,659.400 ՀՀ դրամ՝ գյուղատնտեսության գծով /3,399.400 ՀՀ դրամը Գանձակ համայնքի կողմից լիզինգով

ձեռք բերված կոմբայնի տարեկան վճար, Կարմիրգյուղ համայնքի կողմից լիզինգով ձեռք բերված կոմբայնի տարեկան վճար և 500.000 ՀՀ դրամը Գավառ համայնքի խմելու ջրի և հողերի որակի հետազոտման ծախսեր/:

6. Տրանսպորտի ոլորտում ծրագրվել է 278,073.500 ՀՀ դրամ, որից 104.500.000 ՀՀ դրամը նախատեսվել է համայնքի փողոցների փոսային նորոգման, գծանշման, ոչ ասֆալտապատ փողոցների հարթեցման, դաշտամիջյան ճանապարհների ընթացիկ պահպանման և այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերման համար: 173,573.500 ՀՀ դրամը բաշխվել է հետևյալ կերպ՝ 35,332.100 ՀՀ դրամ՝ 2021 թվականի Կարմիրգյուղի փողոցների ասֆալտապատում սուբվենցիոն ծրագրի նախորդ տարվա պարտք, 22,937.390 ՀՀ դրամ՝ 2021 թվականի Գանձակ, Լճափ, Սարուխան, Նորատուս և Ծովազարդ համայնքների փողոցների ասֆալտապատում սուբվենցիոն ծրագրերի նախորդ տարվա պարտք, 46,948.010 ՀՀ դրամ՝ 2022 թվականին սուբվենցիոն ծրագրով իրականացվելիք Գավառ քաղաքի զերեզմանոցի ճանապարհի և Սայաթ Նովա փողոցի հիմնանորոգման աշխատանքների համար, 64,000.000 ՀՀ դրամ՝ Գավառ համայնքում 2022 թվականին սուբվենցիոն ծրագրով կանգառների և լուսացույցերի ձեռք բերում, իսկ 4,356.000 ՀՀ դրամը ՝ Գանձակ համայնքի կողմից 2021 թ. ձեռք բերված ապրանքների և սարքավորումների նախորդ տարվա պարտք:
7. Շրջակա միջավայրի պաշտպանություն ոլորտում ծրագրվել է 198,585.000 ՀՀ դրամ, որից աղբահանության և սանիտարական մաքրման ծրագրով նախատեսվել է 177,240.000 ՀՀ դրամ, համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման, արտահագուստների և տրանսպորտային միջոցի ձեռք բերման համար, Գավառ համայնքում կանաչապատման , թափառող կենդանիների վնասազերծման և աճեցվող ակտիվների ձեռք բերման համար նախատեսվել է 14,045.000 ՀՀ դրամ դրամ, 7,300.000 ՀՀ դրամը՝ Գավառագետի հունի մաքրման համար:
8. Ջրամատակարարման ծրագրով նախատեսվել է 10,271.000 ՀՀ դրամ, որից 9200.000 ՀՀ դրամը նախատեսված է արոտավայրերում անասուններին ջրով ապահովելու համար, իսկ՝ 1,071.000 ՀՀ դրամը Գեղարքունիքի խմելու ջրի ջրագծի սուբվենցիոն ծրագրի նախորդ տարվա պարտք:
9. Փողոցների լուսավորում ոլորտում ծրագրվել է 52,666.100 ՀՀ դրամ, որից 46,131.600 ՀՀ դրամը՝ արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների համար, իսկ 6,534.500 ՀՀ դրամը Գանձակ, Նորատուս և Սարուխան համայնքների նախորդ տարիների պարտք:
10. Առողջապահության ոլորտում ծրագրվել է 18,000.000 ՀՀ դրամ դրամաշնորհ հատկացնել Գավառի բժշկական կենտրոնին բժշկական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:
11. Մշակույթի ոլորտում ծրագրվել է 160,675.400 ՀՀ դրամ, որից 125,947.900 ՀՀ դրամը գրադարանների, մշակույթի տների պահպանման ծախսեր, սուբվենցիոն ծրագրերի նախորդ տարվա պարտքերի մարում և ֆինանսավորում, 10,000.000 ՀՀ դրամը՝ համայնքային մշակութային միջոցառումների կազմակերպման համար, իսկ 24,727.500 ՀՀ դրամը Գավառ քաղաքում Արծրունի եղբայրների արձանախմբի ձեռք բերման և տեղադրման սուբվենցիոն ծրագրում համայնքի ներդրում:
12. Գավառի երիտասարդական կենտրոնի շենքի արտաքին հատվածի և տարածքի հիմնանորոգման համար ծրագրվել է 28,000.000 ՀՀ դրամ:
13. Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակի շատրվանային համակարգի ձեռք բերման և տեղադրման սուբվենցիոն ծրագրում համայնքի ներդրման համար նախատեսվել է 174,150.000 ՀՀ դրամ, Գավառի Ս. Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի հիմնանորոգման սուբվենցիոն ծրագրում համայնքի ներդրման համար՝ 5,925.800 ՀՀ դրամ, իսկ Գավառ համայնքում խաղարանների կառուցման համար՝ 5,000.000 ՀՀ դրամ:

14. Նախադպրոցական կրթություն ծրագրով նախատեսվել է 380,126.900 ՀՀ դրամ, որից՝ 371,727.200 ՀՀ դրամը ուղղվում է համայնքում գործող թվով 15 մանկապարտեզների պահպանմանը (սուբսիդիա) , իսկ 8,399.700 ՀՀ դրամը նախատեսվել է «Գավառի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքերի հիմնանորոգման սուբվենցիոն ծրագրում համայնքի ներդրման համար:
15. 6,250.000 ՀՀ դրամը նախատեսվել է «Գավառի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում զոհված զինծառայողների անվան դասասենյակի հիմնանորոգման և կահավորման համար:

    500.000 ՀՀ դրամը նախատեսվել է «Գեղարքունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին որպես դրամաշնորհ շենքի հիմնանորոգման համար:
16. Միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն ծրագրերով նախատեսվել է 8,400.000 ՀՀ դրամ համայնքի սովորող ուսանողների կրթական մակարդակի բարձրացման և սոցիալապես անապահով ուսանողներին աջակցելու համար:
17. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 330,197.100 ՀՀ դրամ, որից՝ 325,197.100 ՀՀ դրամը ուղղվում է համայնքում գործող թվով 10 արտադպրոցական հիմնարկների պահպանմանը (սուբսիդիա), իսկ 5,000.000 ՀՀ դրամը նախատեսվել է «Գավառի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:
18. Սոցիալական աջակցություն ծրագրով նախատեսվել է 12,000.000 ՀՀ դրամ, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու համար:
19. 2022 թվականի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 131 481 780,60 ՀՀ դրամ:

    Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտք է կանխատեսվում 104,298.517 ՀՀ դրամ:

Կողմ -15 Դեմ -9 Ձեռնպահ -0

| | |
|---|---|
| ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ | ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ |
| ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ | ԲԱԴԱԼՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ |
| ԲԱԲԻՆՅԱՆ ԼԻԼԻԹ | ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՏԵՐ |
| ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ | ԶԱԽԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ |
| ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ | ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՔԱՐՈՒՀԻ |
| ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ | ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ |
| ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ | ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴԳԱՐ |
| ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ | ՕՀԱՆՅԱՆ ՕՀԱՆ |
| ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ | |

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՑ 6.
ՈՐՈՇՈՒՄ 25-Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման , փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 7-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2022 թվականի փետրվարի 04-ի N02/0657-2022 գրությունը, *Գավառ համայնքի ավագանին որոշում է*

1. Համաձայնություն տալ Գեղարքունիք 2 /որը ընդգրկում է Գավառ քաղաքը և Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս և Սարուխան գյուղերը /12 բնակավայր/ միկրոռեգիոնալ միավորման համակցված փաստաթղթերի նախագծման առաջադրանքը հաստատելու վերաբերյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -24 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ- 0

ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ

ԲԱԲԻՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱԴԱԼՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՏԵՐ

ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ

ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԶԱԽԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴԳԱՐ

ՕՀԱՆՅԱՆ ՕՀԱՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

